«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի

Տնօրեն՝ Ի. Վարդանյանին

Քոլեջի Որակի ապահովման պատասխանատու՝ Լ.Հարությունյան

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը բժշկական և հումանիտար կրթության միջին մասնագիտական կրթօջախ լինելով և իրականացնելով արդիական ուսումնական գործընթացներ, այնուամենայնիվ ժամանակի հրամայականն է վերանայել Քոլեջի գործող կառավարման գծային կառուցվածքը:

Հաշվի առնելով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումները և մարտահրավերները, Քոլեջի ՌԶԾ-ի նպատակները և խնդիրները, 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված ուսումնասիրությունները, մասնավորապես Հայաստանում գործող պետական և ոչ պետական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական (քոլեջների) կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն-ների կառուցվածքները և կառավարման համակարգը, առաջարկում եմ վերանայել և արդիականացնել Քոլեջի կառավարման համակարգը:

Որպես հիմնավորում ներկայացնում եմ իրականացված ուսումնական հաստատությունների կառավարման կառուցվածքային համակարգի համեմատական վերլուծությունը աղյուսակով.

ՄՄՈՒՀ	Վարչական ապարատ	Բաժիններ	ՄԿԾ-ր	Շենքային կարգավիճակ
Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջ	Տնօրեն, 3 փոխտնօրեն, 4 բաժնի վարիչ	Ամբիոններ, կադրերի բաժին, հաշվապահություն Արտաքին կապերի բաժին պահակային ծառայություն գրադարան 3 լաբորատորիա	քույրական գործ, մանկաբարձական գործ, տամնատեխնիկական գործ, դեղագործություն	Սեփական http://www.progress-hamalsaran.am/index.php/am/

Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ	Տնօրեն, 2 փոխտնօրեն Կադրերի կառավարման բաժնի պետ Հաշվապահ	13 ամբիոն, Կադրերի կառավարման բաժին Հաշվապահություն Գրադարան Ուսխորհուրդ	Քույրական գործի կազմակերպում, Քույրական գործ,Մանկաբարձական գործ, Դեղագործություն, Բուժական մերսում, Հիվանդի ընդհանուր խնամք, Ատամնատեխնիկական գործ, Բուժական կոսմետոլոգիա, բուժական կոսմետոլոգիա	Սեփական http://erebounicollege.am/arm/index
Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ	Տնօրեն 3 փոխտնօրեն Կադրերի բաժնի վարիչ Ընդհանուր բաժնի վարիչ	3 ամբիոն Կադրերի բաժին Ընդհանուր բաժին Հաշվապահություն Լաբորատորիաներ Կարիերայի կենտրոն Ուսխորհուրդ Գրադարան		Սեփական https://www.gtp-college.am/
Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ	Հիմնադիր ժողով Տնօրեն Աշխատանքի տեղավորման, կարիերայի և Որակի կենտրոնի վարիչ Ուսումնական մասի վարիչ Պրակտիկայի կազմակերպման պատասխանատու	Հաշվապահություն Ուսումնական մաս Մանկավարժական խորհուրդ Ուսանողական խորհուրդ	Բուժքույրական, Մանկաբարձական, Դեղագործություն, բուժական կոսմետոլոգիա, Ատամնատեխնիկական գործ, կոսմետիկա և դիմահարդարում	Սեփական http://www.armmed.am/

Այսպիսով ուսումնասիրության արդյունքներից կարող ենք փաստել, որ Հայաստանում գործող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մեծ մասը կառավարումն իրականացնում են ոչ միայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հաստիքացուցակով, այլ անհրաժեշտությունից ելնելով և իրենց հեռանկարներից բխող կառավարման կառուցվածքով:

Կատարված համեմատական վերլուծությունը, որի արդյունքում մենք առանձնացրել էինք կոնկրետ 4 բաղադրիչ՝ վարչական ապարատ, գործող ստորաբաժանումներ, իրականացվող ՄԿԾ-ր և շենքային հանարավորությունները:

1. ***Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջն*** ունի երեք փոխտնօրեն և չորս բաժնի ղեկավրներ: Իրականացնում է 4 ՄԿԾ (քույրական գործ, մանկաբարձական գործ, ատամնատեխնիկական գործ, դեղագործություն): Ուսումնական հատատության շենքը սեփական է:
2. ***Երևանի Հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջում*** սովորում են 1300 ուսանողներ, աշխատում են 100-ից ավելի դասախոսներ, ունի ընդամենը երկու փոխտնօրեն՝ ուսումնական և պրակտիկ աշխատանքների գծով: Քոլեջում սովերել են սփյուռքահայ ուսանողներ Սիրիայից և Լիբանանից: Համագործակցում է տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների հետ: Կառուցվածքում, որպես առանձին ստորաբաժանում՝ արտաքին կապերի բաժին կամ պատասխանատու, և հասարակայնության հետ կապերի բաժին առկա չէ: Այն ինչ, ուսումնասիրելով կայքում առկա տեղեկատվությունը, իրականացնում է միջազգային մի շարք միջոցառումներ:
3. ***Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջն*** ունի 3 փոխտնօրեն: Շենքը պետական անհատույց օգտագործման իրավունքով:
4. ***Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտը*** իրականացնելով միջին մասնագիտական կրթություն ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյացի դիմորդների համար, սակայն արտաքին կապերի բաժին, որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանում չունի:

Այսպիսով, ուսումնասիրված հաստատությունների տվյալները մեզ հնարավորություն են տալիս, որպես հիմնավորում փաստել այն հանգամանքը, որ անհրաժեշտ է վերանայել Քոլեջի գործող կառավարման գծային կառուցվածքը: Համաձայն գործող ՌԶԾ-ի, որն էլ ենթակա է վերանայման, որպես հեռանկարային նպատակ սահմանվում է իրականացնել միջազգային տարբեր ծրագրեր, այդ թվում նաև օտար լեզվով կազմակերպել որևէ ՄԿԾ:

Ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները, հաշվի առնելով քոլեջի ֆինանսական հնարավորությունները և անհրաժեշտությունից ելնելով, կադրերի և ընդհանուր բաժինները միավորել և ստեղծել «Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին»: Քոլեջն ունենալով լայն միջազգային համագործակցություն և այդ համագործակցության շրջանակները ընդլայնելու իրական հնարավորություն, ցանկալի է, որպես հեռանկարային նպատակ, որպես կառուցվածքային ստորաբաժանում ստեղծել արտաքին կապերի բաժին: Որի աշխատանքները համատեղությամբ և հասարակական հիմունքներով կարող է իրականացնել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, ով ունի համապատասխան մասնագիտական կրթություն (օտար լեզվի մասնագետ): Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին ընդառաջ՝ անհրաժեշտ է ստեղծել եթե ոչ Որակի ապահովման բաժին, ապա գոնե՝ տնօրենի տեղակալ որակի ապահովման աշխատանքների գծով: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը արդյունավետ համակարգելու նպատակով անհրաժեշտ է ձևավորել անհրաժեշտ, համապատասխան աշխատանքային խմբեր և այլն:

Հարգելի տիկին Վարդանյան, հաշվի առնելով առկա մարտահրավերները և իմ կողմից իրականացված ուսումնասիրությունները և վերլուծությունը, խնդրում եմ Քոլեջի կառավարման գծային կառուցվածքի վերանայման հարցը ներկայացնել Քոլեջի Տնօրինական խորհրդի քննարկմանը:

Զեկուցող, ՈԱ պատասխանատու _____ Լ. Հարությունյան

25.12.2018թ.